

ՄԵՏԱ-ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Meta-Ethics

20-րդ դարու ընթացքին, լեզուա-վերլուծական փիլիսոփայության (Language & Analytic Philosophy) զարգացումով, յառաջ կու գար մետա-բարոյագիտութիւնը (մետա-էթիկա), որ բարոյական արտայայտութիւններով՝ ընդհանուր, տրամաբանական, իմաստաբանական եւ գործնապաշտական կառոյցներու արտացոլումն է: Անխախտ բարոյական արժէքները, որպէս բարոյագիտութեան բովանդակութիւն ա՛լ ժամանակավրէպ դարձած էին. անոնց փոխարէն, բարոյագէտ-փիլիսոփաներու հետաքրքրութեան առարկայ կը դառնար լեզուական վերլուծումը: Վարմունքի բարոյական արժեւորման փոխարէն, այստեղ կը շեշտուին բարոյական արժէքներու կիրառման պահանջքները, ըլլան անոնք իրաւացի կամ անիրաւ եւ՝ քննարկումի կ'ենթարկուին բարոյական կանոններն ու անոնց կայունութիւնը:

Մետա-բարոյագիտութիւնը, որ ինքնին բարոյական կանոններ չի սահմաներ, իր հարցադրումներով աւելի կ'առնչուի տեսական փիլիսոփայութեան: Այլ խօսքով, մետա-բարոյագիտութիւնը կարելի է բնորոշել, որպէս փիլիսոփայութեան ա՛յն բնագաւառը, որ գործնական փիլիսոփայութեան (այստեղ՝ բարոյագիտութեան) կը մօտենայ, մեկնելով իր տեսական փիլիսոփայութեան հեռանկարներէն:

Այժմ ներկայացնենք մետա-բարոյագիտութիւնը՝ հետեւեալ երկու օրինակներով:

Ա. օրինակ. - բարոյագիտութեան ոլորտին մէջ, եթէ փորձենք *լաւ, ճիշդ, պէտք է* կամ *հարկ է* արտայայտութիւններու պարագային, լեզուական վերլուծում կատարել, անոնց գործնական իւրայատկութիւններուն եւ բարոյական արժէքին թափանցելու համար, այն ատեն՝ մետա-բարոյագիտական քննարկում կատարած կ'ըլլանք:

Բ. օրինակ. - եթէ նկատի առնենք բարոյական կիրառելի կանոնները, որոնք որոշ վարմունքի (վարուելակերպի) պատուէրներ, արտօսութիւններ կամ արգելքներ կը թելադրեն եւ փորձենք հաստատել այդ բարոյական կիրառելի կանոններուն *բոլորին կողմէ ընդունուած* ըլալու հանգամանքը եւ անկէ յառաջացած հարցերն ու բանավեճերը, այն ատեն՝ մետա-բարոյագիտական քննարկում կատարած կ'ըլլանք:

Վերոյիշեալ օրինակներէն կարելի է եզրակացնել, որ մետա-բարոյագիտութիւնը ինքնին բոլորովին անկախ մակարդակ մը չէ, այլ անմիջական կապ եւ փոխ-յարաբերական ազդեցութիւն ունի բարոյագիտութեան (այլ խօսքով՝ կանոնական բարոյագիտութեան) հետ: Այստեղ, փոխ-յարաբերական ազդեցութիւն կը նշանակէ, որ երկու մակարդակներն ալ իրարու վրայ փոխադարձ ազդեցութիւն ունին: Երկու մակարդակներու միջեւ գտնուող այս անմիջական